

Բանկի ղեկավարության հայտարարությունը

Բանկի ղեկավարությունը հավաստիացնում է, որ կրում է պատասխանատվություն

- բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- Միջազգային Ֆինանսական հաշվապահական ստանդարտների պահանջների պահպանման համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար
- բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման համար,
- բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:

Վարչության նախագահ՝

Արա Կիրակոսյան

Գլխավոր հաշվապահ՝

Ռուզան Խաչատրյան

14.04.2010թ.